ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՍՐ. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԹՈՐՈՆԹՈ, ՕՆԹ.
ԳԱՆԱՏԱ

REV. KHOREN MAMIGONIAN
MINISTER OF ARMENIAN CHURCHES
OF CANADA AND
NIAGARA FALLS, N.Y.



Holy Trinity Armenian Church
14 Woodlawn Ave. West, Toronto, Ont., Canada

PARISH COUNCIL OF
HOLY TRINITY ARMENIAN CHURCH
MAILING ADDRESS
EXECUTIVE OFFICE 86 YONGE STREET
TORONTO, ONT., CANADA

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՑ

630 Սէքընտ Ավընիւ
Նիւ-Եորք

Սրբազան Առաջնորդ եւ Թեմական Խորհուրդի Պատուարժան անդամներ,

Ի գիտութեան Ձեզ կուգանք հաղորդել թէ Թորանթոյի համայնքս ունեցաւ 1957 տարուայ Ծխական խորհրդի անդամներու ընտրութիւնը փետրուար 17ի Կիրակի օրուան անդամական ժողովին մէջ նախագահութեամբ գաղութիս արժանաւոր հովիւ Գեր.Վազգէն Աբեղայ Թաթոյեանի։95 վճարեալ անդամներէն 51 անդամ ներկայ էին։11 անդամներ քաղաքէն դուրս բնակելուն չէին կրցած գալ իսկ 25 հոգի կը բացակայէին։

Վերընտրեալ և նորընտրեալ անդամները հետևեալներն են.
Պրն.Սեդրակ Ատուրեան—վերընտրեալ 47 քուէով
Պրն.Գրիգոր Իլմասեան—վերընտրեալ 34 քուէով
Պրն.Տիգրան Ունճեան —վերընտրեալ 33 քուէով
Պրն.Զաւէն Մեսրոպեան նորընտրեալ 33 քուէով

Պրն. Յակոբ Սուլին —նախկին հոգաբարձութեան անդամ 20 քուէով կը նկատուի անձնափոխանորդ։

Պրն. Վահէ Ունճեան, Պրն.Պարգեւ Խոճաճեան և Օրիորդ Մարի Փոքատեան կը շարունակեն տարի մը եւս իրենց շրջանը բոլորելու։

Մեր ստացած տեղեկութեան համաձայն այս վերի ընտրեալներէն ու նախկի անդամներէն կազմած են հետեւեալ վարչական կազմը.

Պրն.Գրիգոր Իլմասեան Ատենապետ
Պրն.Սեդրակ Ատուրեան Քարտուղար
Պրն.Վահէ Ունճեան Գանձապահ
Միւս չորս ալ խորհրդականներ։

Ստորագրեալներս ընտրուած ըլլալով օրուայ Ատենապետ եւ Ատենադպիր նախագահութեամբ Հայր Սուրբի կը խնդրենք որ պաշտօնական նկատէք ընտրութիւնը ու յարմար տեսնուելու պարագային շուտով հաճիք վաւերացնել որպէս զի կարենան սկսիլ օրինական աշխատանքներու։

Ի գիտութեան Ձեզ և խորին Յարգանք՝

Ատենադպիր՝ Ատենապետ՝ Նախագահ՝